ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախակրթարանի դաստիարակի թափուր տեղի մրցույթի

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի Հ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախակրթարանի դաստիարակի (1 միավոր) թափուր պաշտոնի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև4),

6)մեկ լուսանկար 3Х4 չափի

7) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ, - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաևզինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **նոյեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 3-ին՝ ժամը 14:00-ին**, Կարմիրգյուղի Հ 1 միջնակարգ դպրոցում, հասցե՝ Ս.Ավետիսյան 45/1: Տեղեկությունների համար զանգահարել (077)070759 հեռախոսահամարով: